

«ՆԱՏՕ-Ի ՕՐԵՐԸ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

«ԱԼՅԱՆՍԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅԾԱՌ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ Է»

Ապրիլի 17-ին Վրաստանում մեկնարկեցին եւ մինչեւ մայիսի 1-ը կշարունակվեն «ՆԱՏՕ-ի օրերը»:

Միջոցառման բացման արարողությանը՝ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ Վրաստանում Յուրսիսատլանտյան այլաձևի օրերին գլխավոր շեշտը պետք է դնել երկրի բնակավայրերում այլաձևի նշանակության, Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի միջեւ համագործակցության հեռանկարների վերաբերյալ քարոզչական լայն արշավանքի կազմակերպման վրա:



Իր ելույթում, Գիորգի Մարգվելաշվիլին ընդգծեց, որ Յուրսիսատլանտյան միությանն անվերջապես (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՉԱՐԿ Է ՆԱՄՈՋԵԼ ՆԱՏՕ-Ի ԸՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Ապրիլի 19-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:

Անդրադառնալով Վրաստանում անցկացվող «ՆԱՏՕ-ի օրեր» միջոցառմանը՝ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ բացառիկ նշանակություն ունի ազգային փոքրամասնություններով հոծ տարածաշրջանների բնակիչներին տեղեկատվություն ներկայացնել Յուրսիսատլանտյան այլաձևի Վրաստանի ինտեգրման եւ Վրաստանի համար ՆԱՏՕ-ի շահավետության մասին: «Այս օրերին Վրաստանում անցկացվում են «ՆԱՏՕ-ի օրերը»: Այս օրերի հետ կապված միջոցառումները կարելի է նշանակություն ունեն այլաձևի ինտեգրման գործընթացի վերաբերյալ բնակչությանը տեղեկատվություն հանձնելու առումով: Հատկապես կարելի է այդ միջոցառումների անցկացումն այն տարածաշրջաններում, որոնք հոծաբնակ են ազգային փոքրամասնության ներկայացուցիչներով»,- ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին:



Այս օրերին Վրաստանում անցկացվում են «ՆԱՏՕ-ի օրերը»: Այս օրերի հետ կապված միջոցառումները կարելի է նշանակություն ունեն այլաձևի ինտեգրման գործընթացի վերաբերյալ բնակչությանը տեղեկատվություն հանձնելու առումով: Հատկապես կարելի է այդ միջոցառումների անցկացումն այն տարածաշրջաններում, որոնք հոծաբնակ են ազգային փոքրամասնության ներկայացուցիչներով»,- ասաց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՎԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ապրիլի 19-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ զարգացման Ասիական բանկի կենտրոնական եւ Արեւմտյան Ասիայի ղեկավարամասնատի նորանշանակ գլխավոր տնօրեն Վերներ Լիի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի կառավարության իրատեսական եւ հետեւողական քաղաքականության

արդյունքում վավերացված տնտեսական աճի դրական դինամիկայի, կառավարության կողմից իրականացվող բարեփոխումների չորս կետից կազմված ծրագրի հաջող իրականացման եւ զարգացմանը (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՊՐԻԼԻ 24. ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆ - 103

103
J A A R
ARMEENSE GENOCIDE
1915 - 2018
1915 - 2018
Հայոց Ցեղասպանության 103-րդ տարելից

Հիշում են և պահանջում
We zullen het nooit vergeten

2018 թվականի ապրիլի 24-ին, ժամը 10:30-ին, Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցում, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանի ձեռնամբ կնատուցվի Սուրբ Պատարագ Մեծ Եղեռնի բյուրավոր Սրբադասված նահատակների հիշատակին:

Հավարտ Սուրբ Պատարագի, եկեղեցու բակում, Ցեղասպանության զոհերի հիշատակի խաչքարի մոտ, կբարձրացվի բարեխոսական աղոթք:

ՂՎԻԹ ԾԻԾԻՆԱԶԵՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԽՈՍԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ապրիլի 18-ին, Վրաստանի խորհրդարանի լիազուստ նիստում, երկրի օրենսդիր մարմնի Թբիլիսիի Իսանիի շրջանից մեծամասնական պատգամավոր Ղվիթ Ծիծինաձեն իր ելույթը նվիրեց ապրիլի 24-ի՝ Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցին:

Ստորեւ ձեռ ուշադրության ենք ներկայացնում Ղվիթ Ծիծինաձեի ելույթը.
- Անցյալ դարի սկզբներին, Օսմանյան կայսրությունում հայազգի բնակչության զանգվածային կոտորածի արդյունքում, այդ ազգի տասնյակ հազարավոր ներկայացուցիչներ ապաստան գտան Վրաստանում: Եղբայրական քրիստոնյա ազգի ներկայացուցիչները, մասնավորապես, հաստատվեցին հանդուրժողականությամբ հայտնի Վրաստանում եւ իրենց ներդրումն ունեցան Թբիլիսիի՝ որպես մուլտիմշակութային քաղաքի, հաստատման գործում: Ապրիլի 24-ը լայնորեն նշվում է՝ որպես այդ ողբերգական իրադարձությունների զոհերի հիշատակի օր: Մայրաքաղաքի Իսանիի մուհիցիպալիտետում, որը ես ներկայացնում եմ Վրաստանի խորհրդարանում, այսօր էլ ապրում են մեկդարյա վաղեմության իրադարձություններից փրկված ընտանիքների սերունդները: Նրանք հավատարմորեն ծառայում են երկրին, որը ապաստան տվեց նրանց եւ, որը նրանք ընդունեցին՝ որպես հայրենիք: Վրաստանի հայազգի բնակչությունը միշտ աչքի է ընկել մեր երկրի հանդեպ հավատարմությամբ: Խորհրդանշական է, որ Վրաստանի մայրաքաղաքում վրացիներին եւ հայերին միավորում են նաեւ ընդհանուր գերեզմանատներ, այսօր էլ ողջ ու մեռած՝ մենք միասին ենք, ինչը կրկին անգամ ընդգծում է քրիստոնեական այս երկու ազգերի եղբայրությունն ու մտերմությունը: Հպարտ եմ, որ ներկայացնում եմ այն շրջանը, որտեղ վրացիներն ու հայերը բարեկամաբար ապրում են համատեղ, հպարտ եմ այն բարեկամությամբ ու փոխհարաբերություններով, որոնցով կապված են տեղի հայազգի բնակիչների հետ եւ, հետեւաբար, նրանց հետ միշտ նշում եմ այս ողբերգական օրը:



ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

Ապրիլի 17-ին, Հայաստանի Ազգային ժողովում, բաց քվեարկությամբ, Հայաստանի վարչապետ ընտրվեց Սերժ Սարգսյանը: Նրա օգտին կողմ քվեարկեց 77 պատգամավոր, դեմ՝ 17:

Սերժ Սարգսյանի թեկնածությունն առաջադրել էր իշխող կառուցվածքի ղեկավար՝ Հայաստանի Ազգային ժողովի «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» եւ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցությունները:

Ըստ Սահմանադրության Հանրապետության նախագահի անհապաղ վարչապետ է նշանակվում Ազգային ժողովի կողմից ընտրված թեկնածուին: Ապրիլի 17-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը ստորագրել է Սերժ Սարգսյանին Հայաստանի վարչապետ նշանակելու մասին հրամանագիրը:



ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼՈՒ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ ՄԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին շնորհավորել է Հայաստանի նորընտիր վարչապետ Սերժ Սարգսյանին՝ Հայաստանի կառավարության ղեկավարի պաշտոնում ընտրվելու առիթով:

«Շնորհավորում եմ իմ թանկագին բարեկամին՝ Սերժ Սարգսյանին, Հայաստանի վարչապետ ընտրվելու կապակցությամբ: Ակնկալում եմք խորացնել համագործակցությունը եւ ամրապնդել մեր ժողովուրդների բարեկամությունը»,- թվիթերյան իր միկրոբլոկում գրել է Վրաստանի վարչապետը:

ԳՈՐԾԱԴԻՐ ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ապրիլի 13-ին Վրաստանի կառավարությունը հաստատեց կնոջ եւ ընտանիքում բռնության դեմ պայքարի եւ այդ ուղղությամբ տուժյալների պաշտպանությանն ուղղված միջոցառումների ծրագիրը:


Ներկայացված ծրագրի համաձայն, 2018-2020 թվականներին պետք է ուժեղացվի ոստիկանների եւ դատախազների մասնագիտացումը՝ ընտանեկան բռնության դեմ եւ կնոջ նկատմամբ բռնության հարցերում: Նրանք տարեկան առնվազն չորս անգամ պետք է անցնեն համապատասխան վարժանքներ: Զգականների եւ դատախազների մասնագիտացումը ընտանեկան կան բռնության հարցերով զբաղված սոցիալական աշխատակիցների թիվը:

«ՆԱՏՕ-Ի ՕՐԵՐԸ» ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

«ԱԼՅԱՆՍԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅԾԱՌ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ Է»


(Սկիզբը՝ 1-ին էջում)

դամակցությունը «Վրաց ժողովրդի պայծառ ընտրությունն է»: Նրա խոսքով, այդ ընտրության հավատարմությունը Վրաստանը հաստատել է միջազգային խաղաղարարական առաքելություններում՝ իր ակտիվ մասնակցությամբ:



իրակլի Կոբախիձեն, Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Սիխեիլ Ջանելիձեն, Կոթոթյան եւ գիտության նախարար Սիխեիլ Չխենկելին, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, պաշտոնական այլ անձինք:

Նշենք, որ Վրաստանում «ՆԱՏՕ-ի օրերը», անկախ պետականության հաստատումից հետո, անցկացվում է 11-րդ անգամ: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի ԱԳ նախարարությունը, այս անգամ ամենից շատ միջոցառումներ ծրագրված են երկրի տարածաշրջաններում, որտեղ կիրականացվի քարոզարշավ՝ նվիրված պետության խաղաղ եւ ժողովրդավարական զարգացման հարցում՝ ՆԱՏՕ-ն որպես երաշխիք թեմային: «ՆԱՏՕ-ի օրերին» նվիրված միջոցառման վրացական կողմի կազմակերպիչը «ՆԱՏՕ-ի եւ Եվրամիության մասին տեղեկատվական կենտրոնն է»: Այն ունի իրավաբանական անձի կարգավիճակ եւ Վրաստանում գործում է 2006 թվականից:



ԱՄՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՆ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՆ ՀՐԹԻՈՒՎԱԿՈՇԵՑԻՆ ՍԻՐԻԱՆ

Ապրիլի 14-ի վաղ առավոտյան Ամերիկայի Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան Սիրիայի դեմ ռազմական գործողություն են սկսել՝ այդ երկրին հրթիռային հարվածներ հասցնելով: Ռազմական գործողության սկսման պատճառ է դարձել ապրիլի 7-ին Դումա քաղաքում տեղի ունեցած միջադեպը, որտեղ, համաձայն որոշ տեղեկությունների, կիրառվել է քիմիական զենք:

Սիրիական բանակի հրամանատարության տարածած հայտարարության մեջ նշված է, որ հարվածների հետեւանքով սիրիական կողմում զոհեր չեն եղել:

ԱՄՆ-ը դաշնակիցների հետ Սիրիայում 110 հրթիռ է արձակել, հաղորդվում է երեք տուժածի մասին:

ԱՄՆ պաշտպանության նախարար Ջեյմս Մեթիսը եւ ռազմածովային գեներալ Ջոզեֆ Դանֆորդը հայտարարել են, որ արեւմտյան ուժերի օդային հարվածները հիմնականում ուղղված են եղել երեք քիմիական ձեռնարկությունների ուղղությամբ: Թիրախներից մեկը գտնվում է Դամասկոսում, իսկ երկուսը՝ Դոմսում:

Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի օպերատիվ կառավարման վարչության պետ Սերգեյ Ռուդսկոյն էլ հայտարարել է, որ Սիրիայի հակաօդային պաշտպանության ուժերը կարողացել են որսալ 71 թեւավոր հրթիռ՝ ԱՄՆ եւ դաշնակիցների կողմից արձակված 103 հրթիռից: Ռուդսկոյի խոսքով, Սիրիայի զինված ուժերի եւ քաղաքացիականների մեջ զոհեր չկան:

Նիդերլանդների վարչապետ Մարկ Ռյուտեն ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կողմից հարվածների հասցնելու համաչափ է անվանել: Դանիան եւս հայտարարել է, որ սատարում է իր գործընկերների գործողություններին: Դանիայի արտգործնախարար Անդերս Սամուելսենը նշել է, որ քիմիական զենքի կիրառումը պետք է իր հետեւանքներն ունենա:

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, որ ճիշտ է համարում Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կողմից իրականացված ռազմական գործողությունն ընդդեմ Սիրիայի:

Էրդողանը մեղադրել է Սիրիայի ղեկավարությանը քիմիական զենք կիրառելու մեջ: Նա հավելել է, որ առաջիկայում Սիրիայի դեմ գործողությունների վերաբերյալ նախատեսում է հեռախոսազրույցներ ունենալ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, ինչպես նաեւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հետ:

Գործողություններին իրենց աջակցություն են ցուցաբերել նաեւ Չեխիան, Նոր Զելանդիան:

Ապրիլի 14-ին ՍԱԿ-ի անվտանգության խորհուրդը մերժել է Ռուսաստանի առաջարկած բանաձեւի նախագիծը, որը դատապարտում էր ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի կողմից Սիրիային հասցված հարվածները: Նախագիծը պահանջում էր նաեւ դադարեցնել ագրեսիան մերձավորարեւելյան պետության նկատմամբ:

Փաստաթուղթը չի ունեցել անհրաժեշտ 9 կողմ ձայները: Բանաձեւի նախագիծը պաշտպանել է երեք երկիր՝ Ռուսաստանը, Բոլիվիան եւ Չինաստանը: Ութ երկիր, այդ թվում՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, արտահայտվել են դեմ դրա ընդունմանը, եւս չորս երկիր՝ Ղազախստանը, Պերու, Գասարակածային Գվինեան եւ Եթովպիան ձեռնպահ են մնացել:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆԱՐԿՎԵՅ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

գացման Ասիական բանկի կողմից Վրաստանին ցուցաբերվող հստակ աջակցության հարցը:

Հանդիպմանը քննարկվեց նաեւ Քվեչեթի-Քոթի նախագծի թեման, որի իրականացման ֆինանսավորումը եւս իրականացվելու է վերոնշյալ բանկի կողմից: Նշենք, որ Քվեչեթի-Քոթի հատվածը Մցխեթա-Ստեփաննոսի-Լարսի միջազգային նշանակության ավտոմայրուղու բաղկացուցիչ մասն է: Նախագիծը նախատեսում է 24 կիլոմետրանոց ճանապարհի կարգավորում. թունելի եւ կամրջի շինարարություն:

Ավելացնենք, որ գարգացման Ասիական բանկը Վրաստանի խոշորագույն գործընկերներից մեկն է, որի աջակցությամբ Վրաստանում իրականացվել է 2,4 միլիարդ ԱՄՆ դոլարի ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր հատվածի նախագծեր:



ԻՐԱՎԱԿԱՆ

ՆԵՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԸՆԴՀԱՏՈՒՄ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Վրաստանի նախագահին առընթեր ներման հանձնաժողովը ժամանակավորապես ընդհատում է բռնության, հանցագործությունները ներման ակտերի հանձնումը: Այդ մասին հատուկ հրավիրված մամուլի ասուլիսում հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Վերոնշյալ որոշումն այն պատճառով մարտի 14-ին Թբիլիսիի Բարնոլի փողոցում տեղի ունեցած

կան հանձնաժողովը բացասական բնութագիր չի ներկայացրել: Նախագահի խոսքով, եթե պայմանական վաղաժամկետ ազատ արձակման հանձնաժողովն իր տրամադրության տակ ուներ նման բնութագիր, որի նկատմամբ վեց անգամ մերժել է Բաքրաձեի վաղաժամկետ ազատ արձակումը, ապա, այդ դեպքում ինչու է այն ներման հանձնաժողովից թաքցրել այդ տեղեկատվությունը:

Նշենք, որ, ուղիղ մեկ ամիս առաջ, նախագահական ներմամբ, արգելված էր ազատ արձակված Վեփսվիա Բաքրաձեն, ապրիլի 14-ին, Թբիլիսիի Բարնոլի փողոցում սառը զենքով սպանել է իր խորթ, 25-ամյա դստերը: Նա արդեն ձերբակալված է: Ընթանում է հետաքննություն:

սպանությունն էր: Սպանության գործով մեղադրյալին, մի քանի ամիս առաջ, նախագահական ներում էր շնորհվել: Ինչպես նշեց Գիորգի Մարգվելաշվիլին, սպանության մեղադրանքով ձերբակալված Վեփսվիա Բաքրաձեի մասին, պետա-

ՎՐՈՆԱԿԱՆ

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԻ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵՐԵԿՈ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

2018 թվականի ապրիլի 19-ին, Վիրահայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Գեղորգ եկեղեցում էին ժողովվել Լատինական-Կաթոլիկ, Ավետարանական-Լյութերական, Ասորիկ Քաղղեական-Կաթոլիկ, Ավետարանական-Մկրտական եկեղեցիների հավատացյալները՝ իրենց առաջնորդների եւ երգչախմբերի հետ:



Եկեղեցում էին Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն Եպիսկոպոս Միրզախանյանը, Հարավային Կովկասի Լատինական կաթոլիկների առաքելական վարչության առաջնորդ Ջուզեպպե Եպիսկոպոս Պազոտտոն, Վրաստանում Ավետարանական-Լյութերական եկեղեցու առաջնորդ Մարկուս Եպիսկոպոս Շոխը, Վրաստանում Ավետարանական-Մկրտական եկեղեցու առաջնորդ Մալխազ Եպիսկոպոս Սոնդուլաշվիլին, կրոնական այլ կազմակերպությունների ղեկավարներ, տարբեր եկեղեցիների հոգևոր սպասավորներ, բազմաթիվ հավատացյալներ:

Բայբերությանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը:

Վրաստանում գործող քրիստոնեական միջեկեղեցական խորհրդի 2018 թվականի նախագահող Վիրահայոց թեմի առաջնորդի առաջարկությամբ եւ նախաձեռնությամբ, երկար տարիների դադարից հետո, վերականգնվեց հոգևոր երգի էկումենիկ երեկո անցկացնելու ավանդույթը եւ որոշվեց այն վերստին իրականացնել խորհրդի անդամ տարբեր եկեղեցիներում՝ ամեն տարի Սուրբ Հարության տոնից հետո:

Միջոցառումը մեկնարկեց ներկաների կողմից իրենց մայրենի լեզուներով հնչող Տերունական աղոթքով, որից հետո երեկոյի կազմակերպիչներ եւ վարողներ Միքայել Ավազյանը եւ Նինա Սերոպովան վրացերեն եւ անգլերեն ներկայացրեցին Վիրահայոց թեմի առաջնորդի ողջույնի խոսքը՝ ուղղված ներկաներին: Թեմակալ առաջնորդը իր ուղերձում անդրադարձ կատարեց 103 տարի առաջ Օսմանյան Թուրքիայի կողմից իր բնօրրանում ապրող հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանությանը, որի շարունակությունը դարձան հրեաների, եզդիների դեմ եւ Ռուանդայում իրականացված ոճրագործությունները:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սարոյանը, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարի աշխատակազմի պետ Էլիսո Լոնիձեն, Կրոնի հարցերով գործակալության ղեկավար Դեմետրի Կոնստանտինովի Կոնստանտինովը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՅՆԵՐԸ

ՃԱՆԱԶՈՒՄ

ՎՐԱՑ-ՀՐԵԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թբիլիսիում, Դավիթ Բաազովի անվան Վրաստանի հրեաների պատմության թանգարանում անցկացվեց տոնական ընդունելություն, որը նվիրված էր վրաց-հրեական 26-դարյա բացառիկ հարաբերություններին, մշակութային ժառանգության հուշարձանի կարգավիճակի շնորհմանը:




Վրաց-հրեական բացառիկ հարաբերություններին, մշակութային ժառանգության հուշարձանի կարգավիճակի շնորհմանը:

Ընդունելությունը վարող, լրագրող Ջամելտո Խուլաշվիլու խնդրանքով, ներկա հասարակայնությանը ողջունյի խոսքով դիմեցին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրկիաշվիլին, սպորտի եւ մշակույթի նախարար Միխեիլ Գիորգաձեն, Վրաստանի մշակութային ժառանգու-

թյան պաշտպանության ազգային գործակալության գլխավոր տնօրեն Նիկա Անթիձեն, Վրաստանում Իսրայելի դեսպան Շափթայ Ցուրիան, թանգարանի տնօրեն Գիվի Դամբաշիձեն: Ելույթ ունեցողները նշեցին, որ Վրաս-

տանը դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին, որպեսզի վրաց-հրեական բացառիկ հարաբերությունները միջազգային ճանաչում ստանան:



ՎՐԱՍԱՆԸ ՆԵՇՑ «ԴԵՂԱ ԷՆԱ»-Ի ՕՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, ապրիլի 14-ին Վրաստանում նշվում է «Դեղա Էնա»-ի՝ Մայրենի լեզվի օրը: Տոնի առթիվ, հիմնական միջոցառումներն անցկացվեցին Թբիլիսիում, «Դեղա Էնա»-ի զբոսայգում: Այստեղ անցկացվեցին գրքի տոնավաճառ, համերգ, ներկայացվեցին Իսկոր Գոգեբաշվիլու անհատական արխիվի նմուշները:

«Դեղա Էնա»-ին նվիրված միջոցառումն անցկացվեց նաև Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլու անվան պետական համալսարանում: Միջոցառմանը մասնակցեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին: Իր խոսքում, Վրաստանի նախագահն առանձնակի ընդգծեց ազգային ինքնության պահպանման գործում մայրենի լեզվի նշանակությունը, նշելով, որ այն նշանակալից ազդեցություն է գործել փոքրաթիվ ազգի փրկության գործում: Գիորգի Մարգվելաշվիլու խոսքով, քառասուն տարի առաջ, մայրենի լեզվի կարգավիճակի պաշտպանության շարժման կազմակերպիչները, հավանաբար, իրենք էլ լրիվությամբ չէին գիտակցում, թե ինչպիսին կլինի ապագան, թեպետ կատարեցին հերոսական քայլ եւ պաշտպանեցին մայրենի լեզուն, դրանով իսկ նոր ազդակ հաղորդելով ողջ ազգային շարժմանը:

ԲՐՂԱԶՈՐԸ ԲԱՐՁՐԱԼԵՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ ԳՅՈՒՂԵՐԻ ԹՎՈՒՄ Է

Եվս 14 գյուղի շնորհիվ է բարձրալեռ բնակավայրի կարգավիճակ, համապատասխանաբար, այդ բնակավայրերի բնակիչները կկարողանան օգտվել «Բարձրալեռ տարածաշրջանների մասին» օրենքով սահմանված արտոնություններից:

Այլ բնակավայրերի թվում բարձրալեռ բնակավայրի կարգավիճակ է շնորհվել Մառնեուլիի մունիցիպալիտետի հայաբնակ Բրղաձոր գյուղին, որը գտնվում է Գյուլիբադի եւ Սաղախլոյի միջև ընկած սահմանամերձ տարածքում:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱԽԹԱՆԳ ԳՈՄԵԼԱՌԻԻ. «ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆ Է ՎՐԱՅ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՐԵՎՏՅԱՆ ՏՐԱՍԿՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍԵՂՈՒՄԸ»

Ապրիլի 18-ին Վրաստանի անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին՝ իր գործունեության հաշվետվությամբ հանդես եկավ երկրի խորհրդարանում:

Հատուկ ծառայության ղեկավարը խոսեց երկրի տարածքում օտարերկրյա հատուկ ծառայությունների գործունեության, բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի եւ բռնազավթող երկրի գործունեության մասին: Ինչպես նշեց Վախթանգ

Գոմելաուրին, երկրի տարածքում գործող օտարերկրյա հատուկ ծառայությունների հիմնական խնդիրը վրաց հասարակայնության շրջանում հակաբեկման տրամադրվածությունների ստեղծումն է: Նրա խոսքով, գերատեսչության կողմից իրականացված

հակահետախուզական միջոցառումների արդյունքում, բացահայտվել են օտարերկրյա հատուկ ծառայությունների փորձերը ուղղված օտարերկրյա ազդեցության ուժեղացմանը: «Այդ խնդիրների լուծման համար նրանք կրկին ակտիվորեն օգտագործում են «Հիբրիդային պատերազմի» տակտիկան, փորձում են քարոզարշավների եւ ապատեղեկատվության, ինչպես նաև

այլ միջոցներով իրականացնել իրենց նպատակները»,- հայտարարեց Վախթանգ Գոմելաուրին: Նրա խոսքով, կոնկրետ ժամանակահատվածում Վրաստանի տարածքում բացահայտվել են ահաբեկչության ֆինանսավորման, ծայրահեղական եւ ահաբեկչական գաղափարների աջակցությամբ ու Վրաստանի առանձին քաղաքացիների արմատականության փաստեր:

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ՝ TBC ԲԱՆԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄ

TBC բանկի գլխավոր տնօրեն Վախթանգ Բուցխրիկիձեն եւ ֆինանսական տնօրեն Գիորգի Շագիձեն, հյուրընկալեցին ֆինանսական ոլորտի փորձագետներին: Խորհրդաժողովն անցկացվեց «Էկոնոմիկայի զարգացման գործում բանկային հատվածի նշանակությունը» թեմայով:



Փորձագետները և TBC բանկի փորձագետները քննարկում են կենտրոնական վրացական բանկային հատվածի վերաբերյալ նորացված վիճակագրական տեղեկատվությունը:

TBC բանկի ներկայացուցիչները խորհրդաժողովի մասնակիցներին մանրամասն տեղեկատվություն ներկայացրին 2012-2017 թվականներին՝ բանկային ոլորտի միջոցների դեպոզիտների տոկոսարդյունքների եւ շահույթի դինամիկայի վերաբերյալ: Խորհրդաժողովն անցկացվեց բանավեճի աշխատակարգով:

Հանդիպմանը TBC բանկի գլխավոր տնօրենն անցկացրեց նոր հարթակի www.BankFacts.ge շնորհանդեսը, որը կգոր-

Advertisement for TBC Bank with contact information and a list of branches. Includes text: «ՅՅՈՒՆԱՅՎՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԶԵՂԱՐԿՎԵԼ Է 36 429 ՀԱՐԿԱՏՈՒԻ ՀԱՐԿԱՅԻՆ 1 688 913 763 ԼԱՐԻԻ ՊԱՐՏՔԸ»

ՈԼՈՐՏ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՄԱՍՈՒԿԱ ԲԱՍՏԱԳԵ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ Է ԱՅՍ ՏԱՐԻ ՎԵՐԱԴՊՐՁՆԵԼ ԶԱՅԻ ԱՎԵԼՅՈՒԿ 450 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻՆ»



Վրաստանի ֆինանսների նախարար Մանուկա Բախտաձեի խոսքով, Չավեյալ արժեքի հարկի (ՉԱՀ) վերադարձումը անմիջապես ներդրում կապակած է միջին և փոքր գործարարության զարգացման հետ: Նրա խոսքով, ընթացիկ տարվա հուլիսի 1-ից փոքր և միջին գործարարության համար կգործարկվի հարկային նոր կարգ, երբ այդ ուղղույթի ձեռնարկները կվճարեն մեկ տոկոսի հարկ, եթե նրանց եկամուտը չի գերազանցում 500 հազար լարին: «Զուգահեռաբար, նրանք կունենան ՉԱՀ-ի ենթակառուցված կարգավորման հնարավորություն: ՉԱՀ-ի ավելցուկի վերադարձումը կարելի է բարեփոխել: ՉԱՀ-ի այն ավելցուկներով, որոնք պատմականորեն կուտակվել են բյուջեում, ցուցադրում են այդ գումարների ծագման և վերադարձման բացասական միտումները: Դա վրաց ձեռներեցների համար մեծ հիմնախնդիրներ էր ստեղծում: Մեր նպատակն է՝ այս տարի վերադարձնել ՉԱՀ-ի ավելցուկ 450 միլիոն լարին: Դա Վրաստանի ՅՄԸ-ի ընդամենը մեկ տոկոսն է կազմում: Ընթացիկ տարվա առաջին եռամսյակում մենք արդեն վերադարձրել ենք 107

միլիոն լարին, իսկ դա նշանակում է, որ մենք հստակորեն հետեւում ենք ժամանակացույցին: Հաջորդ տարի այդ գումարը կկազմի 650 միլիոն լարի», - հայտարարեց ֆինանսների նախարարը:

ԱՌԱՆՑ ԵՎԱՍՏԻ՝ ԾԱՎԱԼԻ ԶԱՍՏԱՏԱՆ ՎԱՐԿ ԶԻ ՏՐԿԻ

Վրաստանում բանկերը եւ ոչ բանկային վարկային ընկերությունները այսուհետեւ պարտավոր կլինեն վարկեր առանձնացնել միայն այն չափով, որով վարկառուները հնարավորություն կունենան այն սպասարկել:

Վրաստանի Ազգային բանկը ձեռնամուխ է եղել համապատասխան «Պատասխանատու վարկավորման շրջանակների մասին» փաստաթղթի մշակմանը, ըստ որի սահմանվելու է վարկի սպասարկման եւ ապահովման գործակիցների լիմիտի առավելագույնը:

Վրաստանի Ազգային բանկի տեղեկատվությամբ, վերոնշյալ փաստաթղթի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ֆիզիկական անձանց շրջանում վարկային պարտքի կտրուկ աճով: Ազգային բանկն արդեն մշակել է փաստաթղթի աշխատանքային տարբերակը, իսկ դրա վերջնական տարբերակի առաջադրումը ծրագրված է մասնավոր հատվածի հետ խորհրդատվության անցկացումից հետո:

ԺԱՄԱՆԱԿՆ Ե ԳՐԱՎԱՏՆԵՐՈՒՄ ԶԱՍՏԱՏԵԼ ՆՈՐ ՎԱՐԿ

Վրաստանի ֆինանսների նախարարությունը գտնում է, որ գործարարության զարգացման արգելակում է այն հանգամանքը, որ գրավատները կարող են որպես գրավ վերցնել սեփականության ներքո գտնվող օբյեկտները: Ինչպես նշեց ֆինանսների նախարար Մանուկա Բախտաձեի,

տաձեն, գրավատների հարցում ծագել են որոշակի հարցեր եւ ժամանակն է, որ դրանց գործունեությունում հստակ կարգավորում իրականացվի: «Գործարարության խրախուսում չի կարող ընկալվել այն փաստը, որ գրավատները իրավասու են որպես երաշխիք ընդունել անշարժ գույքը: Առանձին փորձագետներ գտնում են, որ մարդիկ գրավատանը որպես երաշխիք հանձնելով իրենց տունը, ստացած փողով կարող են սկսել իրենց գործը: Դա սխալ է: Բնակարանի գրավադրությամբ ստացած փողը չի կարող դառնալ մեկնարկային կապիտալ: Պետք է կորցնել օբյեկտի վնասումը եւ պետք է կարողանալ համարձակորեն մայել ճշմարտության աչքերին: Նման գործարքները բացարձակապես շատ ավելի բարդ այլ հիմնախնդիրներ են առաջացնում: Ելնելով դրանից, հարկ են համարում նշել, որ այդ ուղղությամբ պետք է իրականացվեն որոշակի քայլեր: Միանշանակ հարկ է սահմանել այն ակտիվների ցանկը, որոնք կարող են մասնակցել գրավատների գործունեությանը: Ըստ իս, դա պետք է վերաբերի անշարժ եւ շարժական գույքին», - ընդգծեց նախարարը:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՎՈՒԹՈՒՆԸ ՊԱՐՏԱԴՐ Է

Այսուհետեւ ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են դիմորդներին մանրամասն տեղեկատվություն ներկայացնել՝ առաջարկվող վարկերի կամ դեպոզիտների տոկոսադրույքի արդյունավետության վերաբերյալ: Այդ կապակցությամբ փոփոխություններ են կատարվել «Ֆինանսական կազմակերպությունների հաճախորդների իրավունքի պաշտպանության կարգում»: Այդ փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2018 թվականի մայիսի 14-ից:

ԹԱՏՐՈՆ

ՆՈՂԱՐ ԴՈՒՄԲԱԶԵԻ «ԱՍՏՎԱԾ, ԻՆՉԻ՞ ԶԱՄԱՐ»-Ը ՆՈՐԻՑ ԲԵՍՈՒՄ Է

Թբիլիսիի Սանդոկ Ախմետելու անվան պետական թատրոնի բեմը խավարապատ է: Երկայնքով, մառախուղի մեջ նկատվում են շիրմաքարեր, որոնք հիշեցնում են հայկական խաչքարեր: Նիհարակուն, մտավորականի տեսքով պատանին շիրմաքարին մոտ է վառում: Նա բերել է երկու շիշ կոնյակ, իսկ հեռվում երևում են գերեզմանատան արահետներով շարժվող բանվորներ: Նրանց տեսնելով, երիտասարդի աչքերը փայլում են:

- Մի րոպե,- խնդրեց նա նրանց: Գերեզմանափորները նայեցին իրար, իջեցրին գործիքները եւ նստեցին տարօրինակ անձանոթի դիմաց: Իրենց խոսքը հայերեն բառերով համեմելով, այդ մարդիկ հետաքրքրվեցին, թե ով է հանգուցյալը երիտասարդի համար: Ուղղակի ընկեր: Եվ ահա, նա սկսում է իր պատմությունը: - Բարով,- սասց 20-րդ դարի 40-ական թվականների վերջերին եւ թե 50-ականների սկզբներին հատուկ թբիլիսյան խտակական հին բակում հայտնված ճամպուրկով երիտասարդը, ով մոր հետ վերադարձել էր աքսորից: - Բարեւ,- նրան ուղղում է կեպիով մարդը,- եթե թեզ ասես գամարջ, թեզ էլ դուր չի գա, չէ՞: - Վանիչկա քեռի, չե՞ս ճանաչում: Չէ՞ որ ես եմ, Միտոն: Չէ՞ որ ծնվել եմ այս բակում:

Շրջվելով Վանիչկա քեռին, չէր հավատում իր աչքերին: - Ինչքա՞ն ես մեծացել, չես ճանաչի: Նա կանչում է իր ճղճղան կնոջը՝ Անետային, հյուրին ողջունելու եւ շտապ սեղան բացելու համար: Եվ ահա, աքսորից սկսվեց թբիլիսահայ Վանիչկա քեռու եւ երիտասարդի բարեկամությունը, որին դեռես հարկ էր կյանքում գտնել իր ճանապարհը: Եվ անմիջապես ավագ ընկերը Միտոյին, ով պատրաստվում էր հանձնել բժշկական ֆակուլտետ, խորհուրդ է տալիս հանձնել տնտեսագիտականի քննություններ: Հետո, Միտոն այդպես էլ վարվեց: Չէ՞ որ հայ հարեւանն ակամա ավագ ընկեր, բարեկամ, հայր դարձավ աքսորից Թբիլիսի վերադարձած երիտասարդի համար: Իրականում, «Աստված, ինչի՞ համար» ստեղծագործության հեղինակ, հանրահայտ վրաց գրող Նոդար Դումբաձեն նույնպես ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Միտոն իսկապես նման է խորհրդային գրականության դասականին՝ Նո-

դար Դումբաձեին, ում ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, հայերեն, ուկրաիներեն, մոլդովերեն, լեհերեն, ճապոներեն, արաբերեն եւ այլ լեզուներով: Ինքը՝ Նոդար Դումբաձե, 1937 թվականին ծերբակալված է 1956 թվականին արդարացված ծնողների զավակ էր: Այնպես, ինչպես Միտոն: Իսկ քեռի Վանիչկայի հետ միասին, ում անունը Դումբաձեի պատմվածքում Գեորգ քեռի է, իրականում հաճախ էին շախմատ խաղում ու մի-մի բաժակ խմում եւ տղամարդկանց կյանքի դպրոցի մասին զրույցներ անում: Չէ՞ որ ավագ ընկերն էլ անցել էր դժվարին ճանապարհ եւ իր երիտասարդ ընկերոջը պատմելու եւ սովորեցնելու շատ բան ուներ: Բարեկամների համերաշխությունը հաճախ խախտում է եւ երբեմն էլ իր հայ անունուն խրախուսում Վանիչկա քեռու կինը՝ Անետա Գիրգորիանին՝ իր մշտական գլխաշորով եւ լվացքի ամրակների հուլունքաշարով, որը միշտ կրում էր իր վրա, որպեսզի «կոնունալկայի» հարեւանները չզողանային: Ներկայացման այդ կատակերգական կերպարը իր մեջ կրում է դարի կանանց նիստուկացին բնորոշ առանձնահատկությունների բույրը: Իսկ ինչու էր փողի վրա եւ, երբ պատանին տարվում է, հայը ինքն է փակում իր երիտասարդ ընկերոջ պարտքը: Իսկ կինը բողոքում է անունուն. «Ահա, մարդիկ ասում են, որ դուք՝ հայերը, գիտեք փողի գինը, իսկ դու աջուձախ շաղ ես տալիս»: Եվ ավելացնում. «Ատում եմ, փող տալու պահը»: Ներկայացման ընթացքում հաճախ են լսվում հայ-վրացական կատակներ ու դրանք ներկայացվում այնպես վարպետորեն, որ դրանցում ցայտում է, օրինակ, Աննա Գիրգորիանու անձնուրաց սերը հայ անունուն նկատմամբ: Թեեւ հաճախ էլ կշտամբում է անունուն, որ, իբր, իրեն ազգականները հայիոյուն են նրա համար, որ անունանցել է հայի հետ: Ի պատասխան, Վանիչկա քեռին բացում է նրա «մեծ գաղտ-

նիքը», որ կնոջ ազգականները հենց իրենք են, իբր, երկու պարկ ոսկի տվել, որպեսզի ինքը՝ ամուսնանա Անետայի հետ, իսկ հետո վերադարձրել է, հետ չեն վերցրել: Իրականում, խեղճ Անետան հանդուրժում է իր ամուսնու մշտական հարբեցողությունը եւ մշտապես հոգ է տանում, որ նա չխառնի տան ճանապարհը: Եվ խոստովանում է, որ դա անում է, քանի որ շատ է սիրում իր Վանիչկային:

Իսկ սեղանի շուրջ շարունակվում են կարևոր խոսակցությունները եւ առաջին կենացը, իհարկե, նվիրվում է Անետային եւ Միտոյի մորը, հաջորդը՝ հարազատներին, ապա՝ Վրաստանին եւ անմիջապես՝ Հայաստանին: Վրաստանի մասին Վանիչկա քեռին այնպես է խոսում. «Ձեր Վրաստանը, թանկագին իմ Միտո, նման է գեղեցիկ ցեղական ոսկե թամբով նոսրացած Ցավոք, այդ նոսրացի համար տեղ է հատկացված այնքան գեղեցիկ մարգագետնում, այն էլ այնպիսի հիանալի, որ ցանկացած անցողի ցանկանում է նստել նրա վրա եւ փայլել՝ որպես զորավար... Այո, զարմանալի երկիր է մեր Վրաստանը, խմենք նրա կենացը»: Եվ Վանիչկա քեռին սկսում է երգել Թբիլիսիի մասին երգը, այն էլ՝ այնպես, որ ցանկացած վրացի կնախանձեր:

Ի պատասխան դրա, Միտոն ավելացնում է, որ աշխարհում չկա Հայաստանից լավ երկիր: - Այո, չի եղել: Ես կարդացել եմ լսել եմ... Միայն Եջմիածինը ինչ արժե: Եվ դրա համար էլ մարդկությունն իր երկրորդ կյանքը սկսել է Արարատ լեռից...

Վանիչկա քեռու աչքերը լցվում են արցունքով եւ փայլում, հանց մարգարիտներ: - Ընդհանրապես, եթե ոչ մի թերություն...- հավելում է Միտոն խորամանկ ժպիտով: - Ի՞նչ թերություն: Սեղանին բաժակը դնելով, զգաստանում է Վանիչկա քեռին: - Ծով չունեք, ծով,- ողբերգական տոնով ասում է Միտոն, բայց ոչինչ, չէ որ Սեւան ունեք: Ինչո՞վ ծով չէ որ,- իր ավագ ըն-



կերոջը հանգստացնում է Միտոն: - Ի՞նչ ծով, երբ ոչ մի նավահանգիստ չունի,- տխրությամբ պատասխանեց տարեց հայր: - Իսկ դուք նավահանգիստ կառուցեք եւ անվանեք Սեւանաստոպոլ... Ներկայացման տխրալի հանգուցալուծումը պարզաբանում է Վանիչկա քեռու հաճախակի հարբեցողության պատճառը: Մի սարսափելի օր նրան կրկին կանչում են հարցաքննության, չէ որ պատերազմի տարիներին նրա բախտը չբերեց, գերի էր ընկել: Վերադառնալով, ինքն իրեն չնմանվելով, ծերացած Վանիչկա քեռին իր երիտասարդ ընկերոջը՝ Միտոյին, հրավիրում է շախմատային վերջին խաղին: Եվ նրան պատմում է իր դաժան պատմությունը: Դա 42-ին էր: Ռոստոմի մոտ նրա դիվիզիան գերի ընկավ: Բոլորին կանգնեցնելով պատի մոտ, ֆաշիստները պահանջեցին, որ առաջինը դուրս գան հրեաները: Նրանց տարան եւ այդ խեղճերին ոչ ոք այլեւս չտեսավ: Ապա հրամայեցին, որ առաջ գան կոմունիստները: Վանիչկա քեռու մոտ ընկերը, ում հետ կողք-կողքի կռվել է, մի քայլ առաջ եկավ: Վանիչկա քեռին որոշեց ընկերոջը մեռնակ թողնել մահվան դեմ: Չնայած, որ կոմունիստ չէր, ինքն էլ կործանման ընդառաջ քայլ արեց: Բոլորին գնդակահարեցին: Կրակեցին նաեւ Վանիչկա քեռու վրա, չնայած նրա, որ ընկերը ֆաշիստներին սասց, որ նա քայլ է կատարել հանուն համերաշխության, որ նա կոմունիստ չէ: Հրաշքով փրկվելով, տեսնելով իր մարտական ընկերների մահը, Վանիչկա քեռին այդպես էլ կարողացավ հաշտվել նրանց կորստի հետ: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)